ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՐԳՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

Երեւան

Աստուծոյ ողորմութեամբ մեր մայր երկրի անկախութեան ամրապնդման ճանապարհին, ահա մի նոր ամրոց ևս կոթողուեց, ընտրութեամբը ինքնիշխան մեր հայրենիքի առաջին նախագահի, համայն մեր ժողովրդի ազատ կամքով:

Յանուն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու և հաւատացեալ ժողովրդի, Սուրբ Էջմիածնից շնորհաւորանք և օրհնութիւն Ձեզ՝ արժանընտիր նախագահ մեր հարազատ Հանրապետութեան, և մշտանորոգ անապատ եռանդ ու լաւատեսութիւն, որպէսզի Ձեր ազգանուէր գործակիցների հետ ձեռք ձեռքի տրուած՝ շարունակէք անվարան յառաջ ընթանալ անկախութեան ճամբով, ապահովելով հայոց հայրենիքի քաղաքական անվտանգութիւնը և մշակութային ու տնտեսական զարգացումը, իմաստութեամբ ու արդար կորովով յաղթահարելով ամէն դժուարութիւն, ամէն փորձութիւն:

«Եւ արդ՝ մի մերժէք ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ, հասջիք աւետեացն» (Եբր. Ժ 35~36). ամէն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
18 հոկտեմբեր 1991 թ.